



**«Աջակցություն ՆԱՊ բնապահպանական
քաղաքականությունների և ջրային միջավայրի
Ազգային Գործողությունների իրականացմանը»
միջպետական ծրագիր
Ջրային Թույլտվության ձեռնարկ**


Երկիր. Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու TACIS/BCEOM
Ժամկետները օգոստոս 2002թ. - փետրվար 2003թ.

Տեխնիկական առաջադրանք

1. Ջրօգտագործման Թույլտվությունների համակարգի գնահատում:
2. Գետավազանային կարիքների գնահատում (Մարմարիկ գետի փորձնական տարածք):
3. Բնապահպանական տեսչության ֆինանսավորման մեխանիզմի բարելավման ուղիների առաջադրում:
4. Բնապահպանական գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերի ուսումնասիրում:



- Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը**
- ✓ Քննարկվել և վերլուծվել է ջրօգտագործման հայտը՝ բովանդակությունը և նախնական գնահատումը:
 - ✓ Պարզաբանվել են հասարակայնության ծանուցման և մասնակցության խնդիրները:
 - ✓ Մշակվել է Ջրօգտագործման Թույլտվության ձևաթուղթը:
 - ✓ Մշակվել է Ջրօգտագործման Թույլտվության ստացման հայտի լրացման օրինակելի ձև:
 - ✓ Մշակվել են Ջրօգտագործման Թույլտվության օրինակելի ձևեր:
 - ✓ Պատրաստվել է ջրօգտագործման ձեռնարկ, որն առաջարկվել է Ջրօգտագործման Թույլտվության հայցող ջրօգտագործողների և ջրային թույլտվության գործընթացում ընդգրկված մասնագետների համար:



- ✓ Իրականացվել է գետավազանային կառավարման և գետերի ջրի որակի դասակարգման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ ուսուցողական ծրագրեր:
- ✓ Տրվել են Հայաստանի մակերևութային ջրերի որակի էկոլոգիական գնահատման մոտեցումները:
- ✓ Մշակվել է բնապահպանական տեսչության ֆինանսավորման մեխանիզմների բարելավման առաջարկությունների փաթեթ:

Աշխատանքի նպատակն է.

Աջակցել ջրային ոլորտի բարեփոխումներին և Ջրային Օրենսգրքի պահանջների կատարմանը, Ջրային Ռեսուրսների Կառավարման Գործակալության և Բնապահպանական պետական տեսչության տեխնիկական հզորացմանը:

Աջակցել ջրօգտագործողներին ջրօգտագործման թույլտվություն ստանալիս, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվություն տվող մարմնի աշխատակիցներին, տեսուչներին և այլ շահագրգիռ կողմերին ջրօգտագործման և ջրահեռացման թույլտվությունների կարգն ըմբռնելու և ըստ այդ կարգի գործընթացն արդյունավետ վարելու համար: